ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ»-ի «Գրաֆիկական ինտերֆեյսի ծրագրավորում»՝ 108 ժամ, «Ռելյացիոն և ոչ ռելյացիոն տվյալների բազաների նախագծում»՝ 282 ժամ, «Դինամիկ վեբ կայքի նախագծում»՝ 204 ժամ, «Ստատիկ վեբ կայքի նախագծում»՝ 136 ժամ, «Ինտերպրետացվող սկրիպտային լեզվի կիրառում»՝ 75 ժամ, «Բաց ծրագրավորման կոդով կառավարման համակարգերի կիրառում»՝ 70 ժամ, «Ճարտարագիտական մեխանիկա»՝ 108 ժամ մասնագիտական մոդուլների և «Ֆիզիկա»՝ 760 ժամ առարկայի դասախոսների թափուր տեղերի համար:

Մասնագիտական մոդուլների դասախոսի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները.

- ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում:

Հանրակրթական առարկա վարող դասախոս կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Մրցույթը անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: Մասնակիցը Քոլեջի կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք մոդուլին և մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմս, որը բաղկացած է հինգ հարցից, որում կարող են ներառվել նաև 1-3 գործնական հարցեր և կարող է անձին տրվել մինչև հինգ հարակից հարց, որը նույնպես առնչվում է առաջադրանքին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են մինչև օգոստոսի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 23-ին, ժամը 11:00-ին, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում, հասցեն՝ Մամիկոնյանց 52:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (011)-20-96-01: